ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հուլիսի 2021թ. № 267

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 197 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 197 որոշմանը կից ցուցակում Ռաֆիկ Իսակի Պողոսյանի հայրանունը սխալմամբ գրվել է «Հակոբի», հիմք ընդունելով Ռաֆիկ Իսակի Պողոսյանի անձնագիրը և դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի դեկտեմբերի 14-ի «Սպիտակ քաղաքի Ս. Ավետիսյան, Առափնյա, Պանրագործների, Թումանյան և Բանավան փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 197 որոշմանը կից ցուցակի 1-ին տողում նշված «Հակոբի» բառը փոխարինել «Իսակի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. հուլիսի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հուլիսի 2021թ. № 268

«ՍՊԻՏԱԿԻ ՕՐ» ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «Սպիտակի օր» համաքաղաքային միջոցառումների կազմակերպման և անցկացման համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 160 000 ՀՀ դրամ, ըստ կից ներկայացված հավելվածով ծախսերը իրականացնելու նպատակով:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. հուլիսի 14
ք.Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի
ղեկավարի պաշտոնակատարի
2021թ հուլիսի 14-ի
թիվ 268 որոշման

Հ/Հ	Անվանում	Քանակ	Գին	Գումար (ՀՀ դրամ)
1	Զովացուցիչ ըմպելիք (կվաս)	200	200	40 000
2	Եգիպտացորենի բովված հատիկներ	50	250	12 500
3	Քաղցր բամբակ	150	250	37 500
4	Մանկական գնացքի վարձակալութուն	1	40 000	40 000
5	Մուլտիերոսների վարձակալություն (Արջ)	1	16 000	16 000
6	Մուլտիերոսների վարձակալություն (Լոլ, ծաղրածու)	2	7 000	14 000
Ընդամենը				160 000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ԳՅՈՒԼԱԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2021 թվականի N 269

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՎԱՐԴԱՆ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Սպիտակի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգի 12-րդ կետի 1-ին ենթակետը, հաշվի առնելով Վ.Սահակյանի կողմից 08 հուլիսի 2021թ-ի թիվ 034/28-1027 և 15 հուլիսի 2021թ-ի թիվ 034/28-1071 գրություններով ներկայացրած գրավոր բացատրությունները՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Գառնիկի Սահակյանի նկատմամբ, 2021թ-ի հուլիսի 7-ին ժամը 14:00-ից մինչև 15:10-ը աշխատանքի վայրից առանց համայնքի ղեկավարի պաշտոնակատարին տեղեկացնելու բացակայելու համար կիրառել **նկատողություն** կարգապահական տույժը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
3. Սույն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո հանձնել հասցեատիրոջը՝ Վ.Սահակյանին, առձեռն կամ պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ